ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի 2024 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ նկարագիր

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում միջոցառմանը 2024 թվականի տարեկան արդյունքներով հատկացվել է 752 մլն. 151,2 հազար դրամ, դրամարկղային ծախսը 749 մլն.028,7 հազար դրամ՝ կազմելով ծրագրի 99.6%-ը:

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ապարատի պահպանման հատկացումների աճը կազմել է 7,33%:

Կրթության բնագավառում՝ 2024 թվականի տարեկան արդյունքներով թվով 5 ծրագրերի 18 միջոցառումներով հատկացվել է 12 մլրդ. 078 մլն. 837,4 հազար դրամ, դրամարկղային ծախսը՝ 11 մլրդ. 806 մլն. 116,2 հազար դրամ՝ կազմելով ծրագրի 97.7%-ը:

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կրթության բնագավառի հատկացումների աճը կազմել է 24,1%:

Մշակույթի բնագավառում՝ 2024 թվականի տարեկան արդյունքներով թվով 4 ծրագրերի 4 միջոցառումներով հատկացվել է 297 մլն. 359,4 հազար դրամ, դրամարկղային ծախսը՝ 254 մլն. 802,0 հազար դրամ՝ կազմելով ծրագրի 85.7%-ը:

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ մշակույթի բնագավառի հատկացումների աճը կազմել է 1,8%:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից համակարգվող ծրագրերի շրջանակներում 2024 թվականի տարեկան արդյունքներով թվով 3 ծրագրերի 6 միջոցառումներով հատկացվել է 4 մլրդ. 811 մլն.088,4 հազար դրամ, դրամարկղային ծախսը՝ 4 մլրդ. 568 մլն. 432.2 հազար դրամ՝ կազմելով 95.0%: Այդ թվում՝ «Տարածքային զարգացում» ծրագրի «ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով» միջոցառմամբ նախատեսվել է 3 մլրդ. 958 մլն. 645.6 հազ. դրամ, ֆինանսավորվել է 3 մլրդ. 876 մլն. 151,7 հազ. դրամ՝ կազմելով ծրագրի 97.9%-ը:

«Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծում» միջոցառմամբ մարզպետի աշխատակազմին հատկացվել է 350 մլն. 790.6 հազար դրամ, նույնքան էլ կազմել է դրամարկղային ծախսը, կատարողականը՝ 100%:

«ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի ծրագրերի իրականացում» միջոցառմամբ մարզպետի աշխատակազմին հատկացվել է 97մլն. 242.2 հազար դրամ, որը չի ծախսվել աշխատանքների կատարողական չներկայացնելու պատճառով:

Այսպիսով՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմին 2024 թվականի տարեկան արդյունքներով հատկացումները կազմել են 17 մլրդ. 939 մլն. 436,4 հազ. դրամ, փաստացի կատարողականը՝ 17մլրդ. 378 մլն. 379,1 հազ. դրամ՝ 96,9%:

2023 թվականի նույն ժամանակաշրջանի հատկացումները կազմել են 14 մլրդ. 386 մլն. 856,2 հազ. դրամ, փաստացի կատարողականը՝ 14 մլրդ. 156 մլն. 073,0 հազ. դրամ՝ 98,4%:

Հատկացումների գծով աճը կազմել է 24.7%, փաստացի կատարողականի գծով՝ 22,8%:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2024-2023ԹԹ. ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Շիրակի մարզի համայնքների 2024 թվականի տարեկան բյուջեների սեփական եկամուտների պլանը կազմել է 3մլրդ. 213 մլն. 581.7 հազ. դրամ՝ 2023 թվականի տարեկան սեփական եկամուտների պլանը կազմել է 2մլրդ. 877մլն. 633.3 հազ. դրամ, որը ավել է 335 մլն. 948.4 հազ. դրամով, կամ սեփական եկամուտների աճը կազմել է 11.7 %:

Մարզի համայնքների բյուջեների 2024 թվականի տարեկան սեփական եկամուտները կատարվել են 97.9%-ով, նախատեսված 4 մլրդ. 635 մլն. 814.2 հազ. դրամի դիմաց, փաստացի հավաքագրումը կազմել է 4 մլրդ. 540 մլն. 288.3 հազ. դրամ, կամ փաստացի հավաքագրման նվազումը 2023 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 246 մլն. 251.0 հազ. դրամ, կամ փաստացի կատարման նվազման տոկոսը կազմել է - 5.1 % (2024թ. - 2023թ նկատմամբ փաստացի հավաքագրվածի նվազումը պայմանավորված է «ՀՀ պետական բյուջեից աշնանացան ցորենի արտադրության պետական աջակցության ծրագրի փոխհատուցման նպատակով» մարզի համայնքերի բյուջեներին հատկացված՝ 2023թ. 1 մլրդ. 300 մլն. դրամ և 2024թ. 430 մլն. 750.0 հազ. դրամ գումարի չափով, որը արտացոլվել էր մարզի համյանքների բյուջեների սեփական եկամուտների «Այլ մուտքեր տողում»: Առանց «Դրամաշնորհների» հաշվեգրման մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2024 թվականի փաստացի հավաքագրումը կկազմի 4 մլրդ. 109 մլն. 538.3 հազ. դրամ, իսկ 2023 թվականի փաստացի հավաքագրումը՝ 3 մլրդ. 486 մլն. 539.3 հազ. դրամ, կամ փաստացի հավաքագրման աճը 2023 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ կկազմի 622 մլն. 999.0 հազ. դրամ, կամ փաստացի կատարման աճի տոկոսը կկազմի 17.9%):

ՀՀ Շիրակի մարզի համայնքների սեփական եկամուտներում 2023 թվականի նկատմամբ 2024 թվականին անշարժ գույքի հարկի աճը կազմել է 155 մլն. 484.3 հազ. դրամ, որից՝ 127 մլն. 665.9 հազ. դրամի աճը պայմանավորված է անշարժ գույքի հարկի դրույքաչափի ավելացմամբ, 64 մլն. 919.2 հազ. դրամի աճը պայմանավորված է վարչարարությամբ և տարվող աշխատանքի որակով:

ՀՀ պետական բյուջեից «Ֆինանսական համահարթեցման» սկզբունքով համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիան հաշվետու 2024 թվականին նախատեսվել է 9 մլրդ. 352 մլն. 061.3 հազ. դրամ, իսկ 2023 թվականին նախատեսվել էր 6 մլրդ. 995 մլն. 031.1 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 2 մլրդ. 357 մլն. 030.2 հազ. դրամով, կամ 33.7 %-ով, 2025 թվականին նախատեսվել է հատկացնելու 10 մլրդ. 696 մլն. 112.3 հազ. դրամ, որը 2024 թվականի համեմատ ավել է 1 մլրդ. 344 մլն. 051.0 հազ. դրամով, կամ 14.4 %-ով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

20.01.2025թ.